

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



2010-2011

ՈՒՍՏԱՐՎԱ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2011

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին .....	5
Ուսումնամեթոդական վարչություն .....	108
Մինչհամալսարանական կրթության վարչություն .....	113
Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն .....	115
Միջազգային համագործակցության վարչություն .....	120
Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն .....	129
Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն .....	132
Արհեստակցական կազմակերպություն .....	134
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան .....	137
Պատմության քանգարան .....	141
Շրջանավարտների և կարիերայի կենտրոն .....	142
Մշակույթի կենտրոն .....	145
Գիտակազմակերպական բաժին .....	148
Համալսարանական կրթության զարգացման բաժին .....	150
Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին .....	152
Ուսանողական կառույցներ .....	153
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ .....	161
Աստվածաբանության ֆակուլտետ .....	187
Արևելագիտության ֆակուլտետ .....	196
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ .....	209
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ .....	216
Իրավագիտության ֆակուլտետ .....	227
Կենսաբանության ֆակուլտետ .....	247
Հայ բանասիրության ֆակուլտետ .....	299
Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ .....	324
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ .....	350
Պատմության ֆակուլտետ .....	365
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ .....	396
Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ .....	421
Ռուս բանասիրության ֆակուլտետ .....	456
Սոցիոլոգիայի ֆակուլտետ .....	470
Տնտեսագիտության ֆակուլտետ .....	484
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ .....	501
Քիմիայի ֆակուլտետ .....	528
Ֆիզիկայի ֆակուլտետ .....	565
Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետ .....	615
Համահամալսարանական ամբիոններ .....	620
Իջևանի մասնաճյուղ .....	625
«Քենդլ» գիտահետազոտական ինստիտուտ .....	664
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ .....	669
Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն .....	697
Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոն .....	704
Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն .....	710
Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն .....	713
Հունագիտության գիտաուսումնական կենտրոն-գրադարան .....	716
Եգիպտագիտության հայկական կենտրոն .....	717
Ակադեմիկոս Ալեքսեյ Միսակյանի անվան հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոն .....	720
Կոսմոլոգիայի գիտահետազոտական խումբ .....	724
Ռուսական կենտրոն .....	726
Հրատարակչություն .....	728
Գիտական հանդեսներ .....	735
2010-2011 ուստարում ԵՊՀ-ում տեղի ունեցած հիշարժան միջոցառումներն ըստ www.y-su.am-ի լրահոսի .....	736

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Ինստիտուտի գիտական ղեկավար՝ Միմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ քղբակից անդամ,**  
*պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

**Փոխանորդին՝ Գրիգորյան Վարդան Սուրենի, բան. գիտ. թեկնածու**

**Գիտական քարտուղար՝ Ղարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ**

### ***Ինստիտուտի հիմնական խնդիրները***

Հայագիտությունը, նպատակաուղղված լինելով ազգային պետականության կերտմանը և հզորացմանը, հռչակված է պետական քաղաքականության գերակա ռազմավարական ուղղություններից մեկը և կոչված է պահպանելու հայ ժողովրդի ազգային ինքնության նկարագիրը, իրականացնելու սերունդներին կրթելու, հայեցի դաստիարակելու և հայրենանվեր քաղաքացիներ պատրաստելու գործը: Այսօր հայագիտության առջև ծառայած են հայ հասարակության համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ազգային ինքնության պահպանումը, հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների նորովի ուսումնասիրումը, ազգային և համապետական այլ հիմնախնդիրներ: Վերջին տարիներին օրակարգային դարձած ազգային-պետական մի շարք կարևոր հիմնահարցեր՝ հայ-թուրքական հարաբերությունների հաստատման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացները, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը և այլն, պահանջում են նոր մոտեցումներ և նոր արժևորում: Ըստ այդմ՝ հայագիտությունն այսօր դարձել է հայության ազգային և մշակութային անվտանգության ապահովման կարևորագույն գործոն, ինչը փաստում է թե՛ Սփյուռքում, թե՛ Մայր հայրենիքում հայագիտության զարգացման նկատմամբ օրավուր աճող հետաքրքրությունը:

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական հետազոտությունների կարևորագույն գերակայություններից են նաև Հայաստանում արդիական այնպիսի ուղղությունների զարգացումը, ինչպիսիք են՝ հայագիտության բնագավառում տեղեկատվական անվտանգությունը, քաղաքական հայագիտությունը և այլն:

ՀՀ-ի գործունեության առաջնահերթություններից է ինչպես արտերկրում գործող ճանաչված հայագիտական կենտրոնների և ճանաչված հայագետների, այնպես էլ պատմագիտական և քաղաքական հիմնախնդիրներով զբաղվող խոշոր գիտական կենտրոնների հետ գործնական սերտ կապեր հաստատելու անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա բարձրացնել հայագիտական հետազոտությունների մեթոդական, մեթոդաբանական և տեսական մակարդակը: Այդպիսի կապերի հաստատումը կարևորվում է հատկապես այն առումով, որ ներկայումս աշխարհի հայագիտական տարբեր կենտրոններ հայագիտության հիմնարար սկզբունքներում դրսևորում են որոշ մոտեցումներ, որոնք շատ դեպքերում հնարավորություն չեն տալիս ազգային-պետական առանցքային խնդիրների հարցում ձևավորել գործունեության միասնական հայեցակարգ:

### ***Ինստիտուտի գործունեության ուղղությունները***

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գործունեության հիմնական և առանցքային ուղղություններն են՝

- Հայ ազգային ինքնության խնդրի, հայ ժողովրդի հոգեկերտվածքի և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն (Հայ ինքնության և մշակույթի բաժին),

- Հայ հնագիտություն (Հնագիտական հետազոտությունների լաբորատորիա),
- Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագրություն և մատենագիտություն (Ցեղասպանագիտության բաժին),
- Հայ-օսմանական առնչություններ (Հայ-օսմանական առնչությունների բաժին),
- Հայ-վրացական կապեր (Վրացագիտության հայկական կենտրոն),
- Հայագիտական, պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրություն (Աղբյուրագիտության լաբորատորիա),
- Արևմտահայ և արևելահայ լեզվական առնչությունների ուսումնասիրություն (Հայ ինքնության և մշակույթի բաժին),
- Վիրտուալ (էլեկտրոնային-համացանցային) հայագիտություն (Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին):

**2010-2011 ուստարում հրատարակվել են**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս	Խմբագրական աշխատանք	Քարտեզ
2	17	-	-	53	13	4	45

**Ինստիտուտում գործող կենտրոնների, բաժինների եւ լաբորատորիաների թիվը՝ 8**

**ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Գիտական ղեկավար՝ *Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

**Կենտրոնի աշխատակիցների կազմը**

1. Թամարյան Ջեննի Լավրենտիի, կրտսեր գիտաշխատող
2. Դավթյան Համլետ Կարապետի, ավագ լաբորանտ

**Կենտրոնի հիմնական խնդիրները**

- Ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը,
  - ստեղծել համապատասխան ծրագրեր, ուսումնական անհրաժեշտ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ, գրուցարաններ, ինքնուսույցներ «Վրացագիտություն» և «Կովկասագիտություն» մասնագիտացումների համար,
  - պատրաստել հայ վրացագետների կադրեր՝ պետական ապարատում, գիտության, մասնավարժության, դիվանագիտության, թարգմանության և այլ բնագավառներում աշխատելու համար,
  - ծրագրել և անցկացնել գիտական սեմինարներ, կոնֆերանսներ,
  - ուսումնասիրել, թարգմանել և հրատարակության պատրաստել վրացալեզու հայագիտական արժեքավոր աշխատությունները,
  - նպաստել գիտակրթական կապերի սերտացմանը Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների ու նրանց մասնաճյուղերի միջև:
- Գիտական աշխատանքները նվիրված են վրաց գրականության պատմության, հայ-վրացական

լեզվական-բառարանագրական առնչությունների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանությունների, հայ-վրացական գրական-մշակութային կապերի, վրացի և վրացացած հայագետների, հայագիտական աշխատությունների ուսումնասիրությանը, դրանցից կարևորագույնների հայերեն թարգմանությանն ու հրատարակության պատրաստմանը:

Վրացագիտության կենտրոնի աշխատանքներն ընթանում են մասնագիտական երկու ուղղությամբ՝ գիտամանկավարժական («Վրացագիտություն» և «Կովկասագիտություն» խմբերում վրացագիտական առարկաների դասավանդում) ու գիտահետազոտական:

### **Կենտրոնի գործունեության ուղղությունները**

Գիտահետազոտական աշխատանքները հիմնականում նվիրված են հայ-վրացական լեզվական-բառարանագրական առնչություններին, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանությունների արժևորմանը, հայ գրականագիտության արձագանքներին վրաց գրականությանը և վրաց գրականագիտության արձագանքներին հայ գրականությանը, հայ-վրացական գրական-մշակութային կապերի խնդիրներին: Կենտրոնի նպատակն է ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը, ստեղծել համապատասխան ծրագրեր, անհրաժեշտ դասագրքեր ու ձեռնարկներ, բառարաններ, պատրաստել հայ վրացագետների կադրեր, սերտացնել գիտակրթական կապերը Երևանի և Թբիլիսիի մայր բուհերի ու նրանց մասնաճյուղերի միջև:

Ծրագրված են գիտական սեմինարներ: Գործունեության առաջին իսկ տարում՝ 2008 թ-ի ապրիլին, կենտրոնը հրավիրեց միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ-վրաց բանասիրությանը լայն առումով (պատմություն, լեզվաբանություն, տեքստաբանություն, մշակութաբանություն, աղբյուրագիտություն, գրական-մշակութային կապեր), որին, Հայաստանի վրացագետներից և ԵՊՀ հայ բանասիրության և պատմության ֆակուլտետների դասախոսներից բացի, մասնակցեցին և զեկուցումներով հանդես եկան նաև Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտական ուղղության մի քանի գիտաշխատողներ և դասախոսներ:

Ըստ Երևանի և Թբիլիսիի մայր բուհերի միջև կնքված համաձայնագրերի՝ լեզուների իմացությունը տեղերում կատարելագործելու նպատակով կկատարվեն մագիստրոսների և ասպիրանտների փոխանակություններ:

Արդեն հինգերորդ տարին է՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում առկա են «Վրացագիտություն» մասնագիտացումով խմբեր: Պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում և Հայ բանասիրության ֆակուլտետում վաղուց ի վեր գործում են ժամանակակից վրաց լեզվի կամընտրական դասընթացներ: 2011-2012 ուստարվանից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասավանդվում է վրաց լեզու: Այդ դասընթացների զգալի մասը հիմնականում վարում են կենտրոնի աշխատակիցները: 2011-2012 ուստարվանից Պատմության ֆակուլտետի մագիստրատուրայում բացվել է «Կովկասագիտություն» մասնագիտացումը:

Կենտրոնը գիտակրթական և դասագրքերի ստեղծման բնագավառում հասել է որոշակի հաջողությունների: Մասնավորապես կենտրոնի ղեկավար Հր. Բայրամյանը հեղինակել և հրատարակել է «Վրաց գրականությունը V-XIX դարերում», «Հայերեն-վրացերեն գրուցարան», «Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն», «Հայ-վրացական գրական կապերի պատմությունից» գրքերը:

### **Գիտական թեմաներ եւ դրամաշնորհային ծրագրեր**

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն (պետական ֆինանսավորում):	Բայրամյան Հ. Ս.

## **Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում**

**Թեմա 1.** Հաշվետու շրջանում թեմայի շրջանակներում տպագրության է պատրաստվել և հրատարակվել «Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից» գիրքը:

### **Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:**

**Թեմա 1.** Վրաց նորագույն գրականությունը 1900-1960-ական թթ. (կատարող՝ Հր. Բայրամյան):

Վրաց գրականությունը միշտ եղել է հայ հանրության ուշադրության կենտրոնում: XIX դարի երկրորդ կեսից հայ գրողները, քննադատները, թարգմանիչները, հայ-վրացական գրական-մշակութային կապերի երախտավորները հրատարակել են հոդվածներ, գրական դիմանկարներ, գրախոսություններ, ակնարկներ, էսսեներ: Դրանք, սակայն, բավարար պատկերացում չեն տալիս 1500-ամյա վրաց գրականության զարգացման վերաբերյալ: Այդ բացը մասամբ լրացնելու նպատակով հրատարակվեց «Վրաց գրականությունը V-XIX դդ.» գիրքը (Գիրք Ա): Գրականության թեման շարունակական է և կարևոր, այդ նպատակով էլ ձեռնարկվել է սույն աշխատանքը՝ վրաց նորագույն գրականության առաջին շրջափուլի, այն է՝ XX դարի սկզբից մինչև 60-ական թվականների և հայ-վրացական մշակութային փոխհարաբերությունների պատմության շարադրանքը: Գրքում վրաց դասական գրողներին մենագրական գլուխներ են հատկացվելու, անդրադարձ է լինելու նրանց իսկ երկերի մասին հայ քննադատական մտքի գնահատականներին. այդպիսի մոտեցումը աշխատությունը դարձնում է շատ ավելի բովանդակալից, հետաքրքիր է դառնում նաև վրաց ընթերցողի համար: Միաժամանակ դա անդրադարձ է հայ-վրացական գրական-մշակութային հարաբերությունների պատմությանը:

**Թեմա 2.** Հայ-վրացական առնչությունները VII-XII դարերում (կատարող՝ Հ. Դավթյան):

Ուսումնասիրության համար նախընտրած նյութն ընդգրկում է երկու ժողովուրդների պատմության նշանակալից իրադարձություններով լի մի ժամանակաշրջան: Երբ 591 թ-ին, պարսկա-բյուզանդական պայմանագրի համաձայն, սահմանային վերաբաժանումներ կատարվեցին հատկապես Մեծ Հայքի հաշվին, Բյուզանդիային անցած Քարթլիի հատվածը դարձավ վարչատարածքային առանձին միավոր՝ Էրիսմթավարություն: Դրանից հետո Քարթլին, որ Արևելքում դեռևս երկրորդական կարգի կազմավորում էր, աստիճանաբար սկսեց ինքնուրույնության նշաններ ցուցաբերել, որի առաջին արտահայտություններից մեկն էլ վրաց եկեղեցու բաժանումն էր Հայաստանյայց եկեղեցուց: Հոգևոր խզումը տեղի ունեցավ 608-609 թվականներին:

Բայց և այնպես, նույն VII դարում, երբ արաբական տիրապետություն հաստատվեց տարածաշրջանում, առավել ևս IX դարից սկսած, երբ Բագրատունիներն անկախություն նվաճեցին, Հայոց և Վրաց աշխարհների միջև շարունակվեցին բնականոն կերպով զարգանալ ինչպես առևտրատնտեսական, այնպես էլ կրոնական-մշակութային հարաբերությունները, իսկ անհրաժեշտ պահերին նաև զինակցական համագործակցությունը: Իրավիճակն ամբողջովին փոխվեց, երբ XI դարում կործանվեց Շիրակի Բագրատունյաց թագավորությունը, իսկ քիչ անց պատմաբան իջավ և կարճ ժամանակահատվածում հզոր պետական կազմավորում դարձավ վրացական թագավորությունը:

Շուրջ հինգ դար ներառող պատմական այս ժամանակահատվածը, թեև բեկումնային է երկու ժողովուրդների կենսագրության համար, սակայն ընդհանուր գծերով է ներկայացված ինչպես հայ, այնպես էլ վրաց պատմագրության մեջ: Ուսումնասիրության նպատակն է առավել համակարգված և հանգամանալից ներկայացնել նախ՝ VII-VIII, ապա՝ IX-X, երրորդ փուլում՝ XI-XII դարերում կատարված իրադարձությունները Մեծ Հայքում և Վիրքում, փորձել ցույց տալ դրանց միջև եղած կապերն ու միմյանցով պայմանավորված լինելը, փոխազդեցությունները:

**Թեմա 3.** Ժամանակակից վրաց լեզվի շարահյուսություն (կատարող՝ Ջ. Թամարյան):

Այն ունի տեսական և գործնական նշանակություն ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների, Վրաստանի հայկական դպրոցների, հայերենի ու վրացերենի աղերսներն ուսումնասիրողների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններ կատարողների համար (ուսումնական ձեռնարկի շարադրանքն ավարտական փուլում է, շուտով այն կհանձնվի մասնագիտական կարծիքի և խմբագրման):

**Թեմա 4.** Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց» աշխատությունը վրացերեն 1928 թվականին լույս է տեսել Թբիլիսիում և սկզբից ևեթ մեծ համարում ձեռք բերել Վրաստանում: Հեղինակը հետազոտել է XI-XIII դդ. հայ-վրացական պատմամշակութային հարաբերությունները, երբ քաղաքական պայմանների թելադրանքով առավել սերտ էին երկու ժողովուրդների համակողմանի շփումները:

Խնդրո առարկա հետազոտությունը հայագիտության համար չափազանց կարևոր է, սակայն դեռևս անմատչելի է վրաց լեզվին չտիրապետող հայագետներին, մինչդեռ նրա թարգմանությունն ու հրատարակությունը՝ ներածությամբ և ծանոթագրություններով, զգալիորեն կընդլայնեն օգտագործման շրջանակները, թույլ կտան ուսումնասիրելու և արժևորելու հայ-վրացական բանասիրության ձեռքբերումներից մեկը, միջնադարյան հայկական համալսարանների պատմությունն ուսումնասիրողների համար կծառայեն իբրև հույժ անհրաժեշտ սկզբնաղբյուր:

### Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	2	-	-	3	-

### Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

#### Մենագրություն

1. *Բայրամյան Հ. Ս.*, Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 256 էջ:
2. *Դավթյան Հ. Կ.*, Հայոց պատմական հնարավորությունները VI-VIII դարերում, «Նոյյան տապան» հրատ., Երևան, 2010, 316 էջ:

#### Հոդված

1. *Դավթյան Հ. Կ.*, Հայ առաքելական եկեղեցու պատմության պաշտպանությունը ծուռ հայելու մեջ, «Կրոն և հասարակություն», թիվ 12, Երևան, 2010, էջ 118-131:
2. *Թամարյան Ջ. Լ.*, Հովհաննես Ծիրազի նորաբանությունների ոճական առանձնահատկությունները, «Կանթեղ», թիվ 3, (44), Երևան, 2010, էջ 26-34:
3. *Թամարյան Ջ. Լ.*, Հովհաննես Ծիրազի դարձվածների ոճական արժեքը, «Կանթեղ», թիվ 3, (43), Երևան, 2010, էջ 34-39:

### **ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

**Բաժնի վարիչ՝ Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող**

#### ***Բաժնի աշխատակիցների կազմը***

1. Պողոսյան Վարուժան Արամազդի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Գևորգյան Սուսաննա Պարույրի, կրտսեր գիտաշխատող
3. Մակարյան Էվելինա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
4. Մելքոնյան Արմեն Ստեփանի, կրտսեր գիտաշխատող
5. Մելքոնյան Գևորգ Գագիկի, կրտսեր գիտաշխատող
6. Վրացյան Մարգարիտ Ալբերտի, կրտսեր գիտաշխատող
7. Աղուզումցյան Աննա Խաչատուրի, ավագ լաբորանտ
8. Դերձյան Վահանդուխտ Վահանի, լաբորանտ

#### ***Բաժնի հիմնական խնդիրները***

Ցեղասպանագիտության բաժնի հիմնական խնդիրներն են՝

- գիտական աշխատանքների իրականացում ազգային-ազատագրական շարժումների, Հայոց ցեղասպանության պատմության, Հայոց ցեղասպանության պատմագրության (մասնավորապես արևմտյան մասնագետների տեսակետների վերհանման) հիմնախնդիրների ուղղությամբ,
- գիտության համեմատաբար նոր ճյուղի՝ համեմատական ցեղասպանագիտության ուսումնասիրություն և նրա նվաճումների կիրառում Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված գիտական աշխատանքներում,
- Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի պատմության սկզբնաղբյուրների հրատարակություն տարբեր լեզուներով,
- արտասահմանյան կարևոր սկզբնաղբյուրների և պատմագիտական ուսումնասիրությունների թարգմանություն հայերեն,
- բաժնի աշխատակիցների հայերեն ուսումնասիրությունների թարգմանություն եվրոպական առաջատար լեզուներով,
- մատենագիտական աշխատանքների հրատարակում,
- արդի փուլում հայ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրություն և գիտական մեկնաբանություն:

#### ***Բաժնի գործունեության ուղղությունները***

Ցեղասպանագիտության բաժինը իրականացրել է Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության աշխատանքներ՝ իրադարձության տարբեր փուլերի քննական վերլուծության ուղղությամբ: Բաժնի գործունեության հիմնական ուղղություններն են.

1. Քենալականների կողմից քրիստոնյաների բնաջնջման պատմությունը լուսաբանող սկզբնաղբյուրների հրատարակություն ու վերահրատարակություն: Նմանատիպ հրատարակությունները շահեկան են, քանզի նպաստում են հայ ժողովրդի պատմության կեղծարարների ոտնձգությունների մերկացմանը և դատապարտմանը:



2. Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների և Հայոց ցեղասպանության պատմության չհետազոտված կամ նվազ հետազոտված հիմնախնդիրների ուսումնասիրություն:

3. Հայ և օսմանահպատակ այլ ժողովուրդների ցեղասպանությանը վերաբերող գիտական և գեղարվեստական գրականության թարգմանություն:

Հարկ է փաստել, որ նշված ուսումնասիրությունները և հրատարակությունները, պատմագիտական և հայագիտական կարևոր նշանակություն ունենալուց բացի, ի դերն են հանում Օսմանյան կայսրության ցեղասպան քաղաքականության դիմագիծը լայն հենքի վրա, այն է՝ ոչ միայն հայերի, այլև օսմանահպատակ տարբեր ժողովուրդների բնաջնջման ընդգծմամբ:

**Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում**

2010 թ-ին հրատարակվել են ակադեմիկոս Հ. Միմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» (հ. IV) և Վ. Պողոսյանի «Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ)» մենագրությունները:

2011 թ-ին հրատարակվել է Վ. Պողոսյանի կազմած «1922 թ. Զմյուռնիայի աղետը» խորագրով փաստաթղթերի ժողովածուն (անգլերեն և ֆրանսերեն): Վերահրատարակվել է Դորա Սաքայանի կողմից տպագրության պատրաստված «Զմյուռնիա - 1922: Զմյուռնիայի կոտորածների ակնատես հայագի բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը»՝ հայերեն և անգլերեն թարգմանությամբ: Բաժնի աշխատակից Է. Մակարյանը տպագրության է պատրաստել 1899-1922 թթ. Ուրֆայում աշխատանքային գործունեություն ծավալած Յակոբ Զյունցլերի «Արյան և արցունքի երկրում» գրքի հայերեն թարգմանությունը:

2010 թ-ին Գ. Սաքայանի և Է. Մակարյանի թարգմանությամբ լույս է տեսել գերմանացի պատմաբան և աստվածաբան Վ. Բաումի «Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները. Անցյալ-Ցեղասպանությունները-Ներկան» մենագրությունը, որտեղ հեղինակն անկողմնակալ դիրքերից մեկնաբանում է թուրք ժողովրդի պատմությունն ի սկզբանե առ այսօր, խարազանում օսմանյան գահակալների՝ ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառած ազգայնամոլ քաղաքականությունը: 2011 թ-ին հրատարակվել է իսպանացի գրող Գ. Է. Գուարչի «Հայոց կտակ» վեպը՝ Մ. Սուքիասյանի թարգմանությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են կատարվել նաև օղուզական «Դեղե Բորբոթ» էպոսի՝ թուրքերենից հայերեն թարգմանության ուղղությամբ: Նախատեսվում է թարգմանությունը և էպոսում հիշատակված անվանումների բացատրական բառարանն ավարտին հասցնել 2012 թ-ի կեսերին:

Բաժնի աշխատակից Մ. Գևորգյանը էսպերանտո լեզվով շփվող հանրությանը Հայոց ցեղասպանության պատմությանը ծանոթացնելու նպատակով թարգմանում և տպագրության է պատրաստում գերմանացի հրեա Էդգար Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպը:

Ուսումնասիրվել են նաև Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում Կայսերական Գերմանիայի դերակատարությանը վերաբերող նյութեր, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում Կայսերական Գերմանիայի արևելյան քաղաքականության վերաբերյալ:

**Հրատարակություններ**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների քեզիս
-	7	-	-	3	-

## **Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ**

### **Մենագրություն**

1. *Բաում Վ.*, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները. Անցյալը-Ցեղասպանությունները-Ներկան, (գերմաներենից թարգմանեցին՝ Դ. Սաքայանը և Է. Մակարյանը), ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 219 էջ:
2. *Գուարչ Գ. Է.*, Հայոց կտակ, (իսպաներենից թարգմանեց՝ Մ. Սուքիասյանը), ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 484 էջ:
3. *Պողոսյան Վ. Ա.*, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 355 էջ:
4. *Սաքայան Դ.*, Զմյուռնիա - 1922: Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 200 էջ:
5. *Միմնյան Հ. Ռ.*, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք IV, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, 1204 էջ:
6. La catastrophe de Smyrne de 1922 (recueil de documents). Documents réunis et présentés par *Varoujean Poghosyan*, Éditions de l'Université de Erevan, Erevan, 2011, 140 p..
7. *Sakayan D.*, An Armenian Doctor in Turkey Garabed Hatcherian: My Smyrna Ordeal, Edition of Erevan State University, Erevan, 2011, 136 p..

### **Հոդված**

1. *Մելքոնյան Ա. Ս.*, Կցականության առանձնահատկությունները հայերենի և թուրքերենի հոլովական համակարգերում, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 134.2, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, էջ 71-82:
2. *Մելքոնյան Ա. Ս.*, Ժամանակակից հայերենի և թուրքերենի բառակազմական և բառահարաբերական ձևային համեմատական քննություն, «Հայ-թուրքական հարաբերությունները պատմության հոլովություն» մատենաշար, հ. 2, Անկարա, 2011:
3. *Մելքոնյան Գ. Գ.*, Արևմտահայության հանդեպ Գերմանիայի մտադրությունները Առաջին աշխարհամարտի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 131.1, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, էջ 37-45:

## **ՀԱՅ-ՕՍՄԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ**

**Գիտական ղեկավար՝ Մահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ**

### **Բաժնի աշխատակիցների կազմը**

1. Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող
2. Սարգսյան Անի Համլետի, լաբորանտ

**Բաժնի հիմնական խնդիրները**

Հայ-օսմանական առնչությունների բաժնի գործունեության հիմնական նպատակն է ուսումնասիրել Օսմանյան կայսրության իրականացրած վարչական, հարկային, ժողովրդագրական, կրոնական և լեզվական քաղաքականությունը, քննել հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների իսլամացման փուլերն ու նպատակները, տեղանունների թրքացման մեթոդները (մասնավորապես Արևմտյան Հայաստանում և հարակից հայաբնակ շրջաններում): Կենտրոնի նպատակներից է նաև դաշտային աշխատանքների միջոցով ուսումնասիրել Թուրքիայի Ռիզե նահանգի կազմում գտնվող պատմական հայոց Համշեն գավառի տեղանուններն ու ժողովրդագրությունը, բռնի իսլամացված համշենցիների ներկայիս սերունդների խոսակցական թուրքերենում պահպանված հայերեն բառերը, ինչպես նաև ինքնության խնդիրները: Կենտրոնի խնդիրներից է նաև այս հարցերի վերաբերյալ թուրքական պատմագրության կեղծարարության բացահայտումն ու հակադարձումը:

Կենտրոնում ուսումնասիրվում են թուրքականության գաղափարախոս Ջիա Գյոքբալիի քաղաքական, մշակութային և տնտեսագիտական հայացքները: Համակողմանի պատմաբանասիրական, աղբյուրագիտական քննության են ենթարկվել Ջիա Գյոքբալիի «Թուրքականության հիմունքները», «Թուրքական քաղաքակրթության պատմություն» հիմնարար աշխատությունները, օսմանական տարբեր հանդեսներում հրատարակված սոցիոլոգիական, մանկավարժական, լեզվաբանական բնույթի հոդվածները, բանաստեղծությունները:

Լեզվաբանական քննության են ենթարկվում նաև Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում պահվող հայատառ-դիչաղերեն ձեռագրերը: Առաջին անգամ նկարագրվել է 1634 թ. գրիչ Ավետիքի (N 3522) ձեռագրում տեղ գտած «Քերականություն դիչաղաց» հայատառ դիչաղերեն հատվածը (էջ 226-353), որի մասին համապատասխան զեկուցումներ են ներկայացվել ԵՊՀ-ում հայ-դազախական և Աստանայի Լ. Ն. Գումիլյովի անվան ազգային համալսարանում կայացած միջազգային թուրքագիտական գիտաժողովներում:

**Բաժնի գործունեության ուղղությունները**

1. Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում տեղանունների թրքացման քաղաքականության ուսումնասիրություն,
2. Ջիա Գյոքբալիի քաղաքական, մշակութաբանական հայացքների քննություն,
3. Դաշտային աշխատանքների հիման վրա Համշենի միկրոտեղանունների իմաստակառուցվածքային քննություն,
4. Հայատառ-դիչաղերեն ձեռագրի լեզվական քննություն,
5. Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում,
6. Օսմանյան աշխարհագիր մատյանների, տարեգրքերի և հայկական ու օտար աղբյուրների համադրությամբ հայկական նահանգների ժողովրդագրական շարժերի ուսումնասիրություն,
7. Թուրք պատմագրության կեղծարարության բացահայտում և հակադարձում,
8. Հայ ուսանողների համար օսմաներեն դասագրքի ստեղծում:

**Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում**

1. Լ. Ս. Սահակյանը 2010 և 2011 թթ. ամռանը ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի աջակցությամբ դաշտային աշխատանքներ է կատարել Թուրքիայի Ռիզեի և Արդվիհի նահանգների համշենաբնակ շրջաններում՝ հատկապես պատմական հայոց Համշեն գավառում (Չայեի, Չամլիհենշին, Համշեն և Արտաշեն գավառներում), որտեղ գրանցվել են մահմեդականացված համշենցիների ներկայիս սերունդների խոսակցական թուրքերենում պահպանված բազմաթիվ հայերեն միկրոտեղանուններ, կենցաղային բառեր, բանահյուսական նյութեր: Ուսումնասիրման արդյունքների մի մասը լույս է տեսել «Համշենի հայկական

միկրոտեղանունների իմաստակառուցվածքային քննություն» ծավալուն հոդվածում: Հրատարակության է պատրաստ Լ. Սահակյանի՝ նույն թեմային վերաբերող մենագրությունը՝ հայերեն, թուրքերեն, ռուսերեն լեզուներով:

2. Հրատարակության է պատրաստվել Ալ. Սաֆարյանի «Ձիա Գյոքավիր և թյուրքականության հիմունքները» մենագրությունը (Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյան):

3. Վերահրատարակվել է Լ. Ս. Սահակյանի՝ «Turkification of the toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey» (Monreal-Arod Books, 2011, 70 p.) մենագրությունը:

4. Կենտրոնի աշխատակիցներ Ալ. Սաֆարյանը և Լ. Սահակյանը, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Ա. Սիմոնյանի ղեկավարությամբ, քննության են ենթարկել 1634 թ. գրիչ Ավետիքի (N 3522) ձեռագրում տեղ գտած «Քերականություն դփչաղաց» հայատառ դփչաղերեն հատվածը՝ վեր հանելով այդ նյութի պատմալեզվական արժեքը:

5. Կենտրոնի աշխատակիցները գեկուցումներով հանդես են եկել միջազգային գիտաժողովներում:

### Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Չեկուցումների թեզիս
-	1	-	-	4	2

### Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

#### Մենագրություն

1. *Sahakyan L. S.*, Turkification of the toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Monreal-Arod Books, 2011, 70 p..

#### Հոդված

1. *Սահակյան Լ. Ս.*, Համշենի հայկական միկրոտեղանունների իմաստակառուցվածքային քննություն, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, «Լուսակն» հրատ., Երևան, 2011, էջ 380-413:
2. *Սարգսյան Ա. Հ.*, Բաքիի ստեղծագործությունների ուսումնասիրության պատմությունից, «Orientalia», պրակ 12, Երևան, 2011, էջ 47-55:
3. *Սարգսյան Ա. Հ.*, 16-րդ դարի թուրք բանաստեղծ Բաքիի դիվանի լեզվի որոշ առանձնահատկությունների շուրջ, «Իրան-նամե», հ. 42-53, Երևան, 2010-2011, էջ 90-93:
4. *Sahakyan L. S.*, The Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Armenian Folia Anglistika, International Journal of English Studies, 1-2, (7) 2010, p. 149-162.

#### Չեկուցումների թեզիս

1. *Сафарян А. В., Саакян Л. С.*, О филологической ценности армяно-кыпчакских рукописей 17 в., хранящихся в Матенадаране (Ереван), Тезисы международного тюркологического симпозиума “Тюркский мир: История и современность”, Астана, 2011, с. 103.
2. *Safaryan A., Sahakyan L.*, "On Adaptation of Traditional Images in the Works of Eastern Christian and Islamic Poets", Abstracts of The World Philosophy Day Congress, Tehran, 2010, p. 249.

### ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ

*Բաժնի վարիչ՝ Մանուկյան Ժակ Սամվելի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

#### **Բաժնի աշխատակիցների կազմը**

1. Մաղալյան Վլադիմիր Սարգսի, բան. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող
2. Ազլյան Վահագն Ռոբերտի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Հովհաննիսյան Լիլյա Հայկազի, կրտսեր գիտաշխատող
4. Մինասյան Մարինե Պետիկի, կրտսեր գիտաշխատող
5. Սարգսյան Վարդուհի Ֆելիքսի, կրտսեր գիտաշխատող
6. Բաբայան Հասմիկ Մամիկոնի, լաբորանտ

#### **Բաժնի հիմնական խնդիրները**

Բաժինը զբաղվում է հայ ինքնության մշակույթի պահպանման և զարգացման հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

#### **Բաժնի գործունեության ուղղությունները**

1. Հայ ինքնության ձևավորմանը նպաստող գործոններ,
2. Սփյուռքում ազգային ինքնության պահպանման խնդիրը,
3. Կրթությունը որպես մշակութային անվտանգության ապահովման միջոց,
4. Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Արևմտյան Հայաստանում և Նախիջևանում հայկական մշակութային արժեքների ոչնչացման պետական քաղաքականությունը և դրա հետևանքները:

#### **Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում**

Բաժնում կատարված աշխատանքները ամփոփված են առանձին հրատարակություններում: Ուսումնասիրվել են 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ նոր գրականության վերաբերյալ նյութեր, մշակվել են բազմաթիվ արխիվային նյութեր, մասնավորապես հայ նոր գրականության հարցերը Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում թեմայի վերաբերյալ, ինչպես նաև զեկուցվել է Ա. Չոպանյանի հողվածի ուսումնասիրությունը Վ. Թեքեյանի «Հոգեր» ժողովածուի և «Գյուցազնորեն» շարքի վերաբերյալ: Ուսումնասիրվել է նաև ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում:

#### **Հրատարակություններ**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Չեկուցումների թեզիս
-	3	-	-	4	1

## **Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ**

### **Մենագրություն**

1. *Միմոնյան Ա. Հ., Մանուկյան Ժ. Ս., Սկրտչյան Մ. Գ., Հովհաննիսյան Լ. Հ., Աբրահամյան Ս.*, Երևանի պետական համալսարանը Արցախյան զոյապայքարում, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 256 էջ+14 էջ ներդիր:
2. *Կարապետյան Հ. (Օննիկ Յուսուֆ)*, Վերածնված կյանք մը երևակայական և իրական սարսափների արանքում, պեղումներ և կենսագրական նոթեր. Մեծ եղեռնից մազապուրծ վերապրողի հիշողություններ, (խմբ.՝ Մաղալյան Վ. Ս.), ՀՀ ԳԱԱ Մեծ եղեռնի թանգարան-ինստիտուտի հրատ., Երևան, 2010, 240 էջ+16 էջ ներդիր:
3. *Մաղալյան Վ. Ս.*, Խրամի գմբուխտ ավերին, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 220 էջ+1 էջ ներդիր:

### **Հոդված**

1. *Մաղալյան Վ. Ս.*, Ականավոր պատմաբանը ժամանակակիցների հուշերում, «Էջմիածին», թիվ 10, Էջմիածին, 2010, էջ 142-148:
2. *Մաղալյան Վ. Ս.*, Հայրենագետի գիրք ընդհանրականը, «Էջմիածին», թիվ ԺԲ, Էջմիածին, 2010, էջ 134-137:
3. *Մաղալյան Վ. Ս.*, Էջեր վրացահայ գրատպության պատմությունից (1885-1920 թթ.), «ԲԵՀ», թիվ 134, 2011, էջ 13-25:
4. *Մաղալյան Վ. Ս.*, Անվանի հայագետն ու վաստակաշատ համալսարանականը, («Հովհաննես Բարսեղյան-կենսամատենագիտություն» գրքի առաջաբանը), ԵՊՀ հրատ., Երևան, 2011, էջ 13-20:

### **Չեկուցումների թեզիս**

1. *Մանուկյան Ժ. Ս.*, Աղբբեջանի արտաքին քաղաքականության հակահայկական ուղղվածությունը, «Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության» գիտաժողովի թեզիսների ժողովածու, ՊՆ հրատ., Երևան, 2011, էջ 66:

## **ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

*Բաժնի վարիչ՝ Հովհաննիսյան Միեր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու*

### **Բաժնի աշխատակիցների կազմը**

1. Աղաջանյան Թագուհի Կամոյի, կրտսեր գիտաշխատող
2. Մարտիրոսյան Հասմիկ Էդիկի, կրտսեր գիտաշխատող
3. Սեդրակյան Նինա Հաբեթի, ավագ լաբորանտ
4. Հակոբյան Լիլիթ Վարդանի, լաբորանտ
5. Մարտիրոսյան Նարեկ Միքայելի, լաբորանտ

### **Բաժնի հիմնական խնդիրները**

Կարևորելով համացանցի դերը ընդհանուր տեղեկատվական դաշտում՝ բաժինը ստանձնել է համացանցում հայագիտական և հակահայագիտական կայքերի մոնիթորինգի, դրանցում գետեղված նյութերի վերհանման, համակարգման, հասցեագրման գործը: Ինստիտուտի համապատասխան գիտաշխատողների կողմից ստացված համարժեք և նախահարձակ գիտական հոդվածներն ու այլ բնույթի նյութերը բաժնի կողմից տեղադրվում են ինստիտուտի պաշտոնական կայքում /www.armin.am/, ինչպես նաև այլ ինտերնետային կայքերում:

### **Բաժնի գործունեության ուղղությունները**

Բաժնի կողմից շարունակվում է իրականացվել ինստիտուտի պաշտոնական կայքի /www.armin.am/ սպասարկումը, ինչպես նաև ավարտին են հասցվել նոր հայագիտական կայքերի նախագծման ու պատրաստման աշխատանքները: Մեր կողմից դիտարկվող նախորդ 49 հակահայկական ուղղվածության «գիտահանրամատչելի» բովանդակությամբ նյութեր տարածող աղբյուրներից և թուրքական կայքերին ավելացել են ևս 4 նոր կայքեր:

### **Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում**

Ամփոփելով 2010-2011 ուստարում բաժնի կատարած աշխատանքը՝ անհրաժեշտ է մատնանշել, որ բացի նախանշված համացանցային մոնիթորինգից և հիշյալ կայքերի դիտարկումներից՝ ակտիվորեն աշխատանքներ են սկսվել 8 նոր հայագիտական կայքերի պատրաստման ուղղությամբ: Դրանք նախատեսվում է հարստացնել բաժնի՝ վերջերս ստացած նորագույն թվայնացման սարքավորման միջոցով թվայնացված էլեկտրոնային գրականությամբ:

### **Հրատարակություններ**

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	1	1

### **Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ**

#### **Հոդված**

1. Հովհաննիսյան Մ. Ս., Հայոց ցեղասպանության ներկայացման խնդիրները համացանցում, «Պատմություն և մշակույթ. հայագիտական հանդես», թիվ Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, էջ 94-101:

#### **Ձեկուցումների թեզիս**

1. Հովհաննիսյան Մ. Ս., Հայագիտության արդի մարտահրավերները համացանցում, «Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության» գիտաժողովի թեզիսների ժողովածու, ՊՆ հրատ., Երևան, 2011, էջ 44-45:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ**

**Լաբորատորիայի վարիչ՝ Հարությունյան Բարկեն Հարությունի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

***Լաբորատորիայի աշխատակիցների կազմը***

1. Հայրունի Աշոտ Նորայրի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
2. Գանիելյան Էդվարդ Գալուստի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Հարությունյան Ռուզաննա Վասպուրականի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
4. Գրիգորյան Հովիկ Բարկենի, գիտաշխատող
5. Մխիթարյան Վարդան Գառնիկի, գիտաշխատող (քարտեզագիր)
6. Բաղայան Գեղամ Միհրանի, կրտսեր գիտաշխատող
7. Եսայան Ջուլիետա Հրաչի, կրտսեր գիտաշխատող
8. Ղամբարյան Գոհար Գուրգենի, կրտսեր գիտաշխատող
9. Ապիկյան Տիգրան Ժիրայրի, ավագ ինժեներ
10. Արզումանյան Սրբուհի Անդրանիկի, ավագ ինժեներ
11. Բաղդասարյան Լիլյա Ռոբերտի, լաբորանտ
12. Սիմոնյան Հակոբ Ալբերտի, լաբորանտ

***Լաբորատորիայի հիմնական խնդիրները***

ԵՊՀ Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիան հանրապետության պատմական աշխարհագրության և քարտեզագրության միակ օջախն է: Լաբորատորիայի աշխատակիցների մեծ մասը զբաղվում է Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության ատլասի ստեղծման աշխատանքներով, որն ունի ոչ միայն զուտ գիտական, այլև կարևոր քաղաքական նշանակություն մեր նորանկախ Հայաստանի Հանրապետության պայմաններում: Աշխատանքները տարվում են երկու ուղղությամբ. մի կողմից կազմվում են ատլասի քարտեզները, մյուս կողմից պատրաստվում է «Հայաստանի Առաջին Հանրապետությունը 1918-1920 թթ.» աշխատությունը: Քարտեզագրական աշխատանքները կատարվում են պրոֆ. Բ. Հարությունյանի և Գ. Բաղայանի կողմից, որոնց կազմած քարտեզները ձևավորում են Վ. Մխիթարյանը, Գ. Ղամբարյանը և Ս. Արզումանյանը: Վ. Մխիթարյանը հանդես է գալիս նաև հեղինակային քարտեզներով և պատրաստում է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզագրությունը» թեմայով, իսկ Հայաստանի Առաջին Հանրապետության պատմությանը նվիրված աշխատությունը պատրաստում են դոցենտներ Է. Գանիելյանը և Հ. Գրիգորյանը: Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում հայ-գերմանական հարաբերությունները ուսումնասիրում է Ա. Հայրունին, ում աշխատանքները քարտեզագրվում են:

Հայաստանի Առաջին Հանրապետության պատմությունը, պետք է ասել, ծուռ հայելու մեջ է ներկայացվել խորհրդահայ պատմագրության մեջ: Նպատակը շատ պարզ էր. վարկաբեկել հայկական անկախ պետականությունը և ցույց տալ, որ հայ ժողովրդի փրկությունը միայն ու միայն խորհրդային իշխանություն ընդունելու և հաստատելու մեջ էր: Սփյուռքում էլ ստեղծվել են աշխատություններ, որոնցում Հայաստանի Առաջին Հանրապետությունը ներկայացվում էր առավելապես պայծառ գույներով: Այսօր ժամանակն է, որ Հայաստանի Առաջին Հանրապետության պատմությունը ներկայացվի միանգամայն անաչառ կերպով: Առաջիկա ամիսներին ատլասի ձևավորման աշխատանքները կավարտվեն:



**Լաբորատորիայի գործունեության ուղղությունները**

- Հայաստանի պատմական աշխարհագրություն և քարտեզագրություն
- Հայաստանի Առաջին Հանրապետության պատմական ատլասի ստեղծում
- Հայաստանի ժողովրդագրական քարտեզների ստեղծում
- Ուսումնամեթոդական քարտեզների ստեղծում
- Պայքարի ծավալում աղբբեջանական և թուրքական քարոզչության դեմ

**Գիտական թեմաներ եւ դրամաշնորհային ծրագրեր**

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայաստանի Առաջին Հանրապետության պատմական ատլաս (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Բ. Հ.

**Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում**

**Թեմա 1.** Ատլասը պատրաստելիս անհրաժեշտ եղավ ծանոթանալ հրապարակի վրա եղած, պետք է խոստովանել, բավականին հարուստ գրականությանը, որի մեջ առանձնանում են Ս. Վրացյանի, Ալ. Խատիսյանի և շատ ուրիշների աշխատությունները: Անհրաժեշտ եղավ աշխատել մեր հանրապետության Ազգային արխիվում և Ազգային գրադարանում, որտեղ, բնականաբար, հարուստ նյութեր են պահպանվում խնդրի վերաբերյալ: Հնարավոր եղավ ուսումնասիրելու ԱՄՆ-ի Բոստոն քաղաքի դաշնակցության արխիվը, որի նյութերը ցայսօր մշակված չեն, սակայն մեծ արժեք են ներկայացնում ուսումնասիրողի համար: Ըստ որում՝ այդ նյութերը խիստ բազմազան են՝ վերաբերելով Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականությանը, հեղափոխությանը և հակահեղափոխությանը, տնտեսական զարգացմանը, դիվանագիտական գործունեությանը: Հնարավոր եղավ արժեքավոր նյութեր հավաքել Վաշինգտոնի Ազգային արխիվ 2-ից, ինչպես նաև Ֆրանսիայի արտգործնախարարության և Մոսկվայի ու Սանկտ Պետերբուրգի արխիվներից:

Հայաստանի Առաջին Հանրապետության ատլասի ստեղծումը կապված էր մի շարք դժվարությունների հետ: Հատկապես բարդ էր հայ-աղբբեջանական սահմանագծի և Վրաստանին հարող շրջանների քարտեզագրումը, սակայն այդ աշխատանքների մեծ մասը հաղթահարված է, և ատլասի քարտեզները կազմված են: Լաբորատորիայի աշխատակիցներ Բ. Հարությունյանը և Գ. Բաղդասյանը մի քանի տասնյակ քարտեզներ են հրատարակել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս»-ում, որը տպագրվել է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: ՀՀ անկախության 20-ամյակի կապակցությամբ պրոֆեսոր Բ. Հարությունյանի խմբագրությամբ և քարտեզների մեծ մասի հեղինակությամբ հրատարակվել է «Սարդարապատից Շուշի» ատլասը:

**Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:**

